ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1282-Ա/2 «12» դեկտեմբեր 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1192-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը, մասնակցության հայտը հաստատելու մասին» N 1192-Ա/2 հրամանի հավելված N 1-ի 5-րդ կետում «2022 թվականի սեպտեմբերի 21-ին» բառերը փոխարինել «2022 թվականի սեպտեմբերի 20-ին» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

7/12/2022

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1192-Ա/2 «24» 06 2022 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «գ» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն № 2 հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

6/24/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի ___սեպտեմբերի___ ___6___ *-ի*
№ ___1192-Ա/2___ *հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2022 թվականին անցկացվող խճուղավազքի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) հանրապետությունում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում,
2) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում:

2. Խնդիրներն են՝ բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի և «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարը կանցկացվի Փարաքար-Էջմիածին մայրուղում՝ (ՀՀ Արմավիրի մարզ) 2022 թվականի սեպտեմբերի 21-ին:

6. Մեկնարկը՝ Փարաքար գյուղի մերձակա տարածքից՝ ժամը 13:00-ին. մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից երկու ժամ առաջ, անձը հաստատող փաստաթղթով:

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող բոլոր քաղաքացիները, ովքեր ունեն ֆիզիկական համապատասխան պատրաստականություն, կամ տեղեկանք առողջության վերաբերյալ և Մրցաշարին մասնակցելու հետևանքով

առաջացող ռիսկերի գնահատման և ստանձնման պայմանագիրը (պայմանագրին կարելի է ծանոթանալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում՝ https://escs.am/) (մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայաչուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ):

8. Մրցաշարը կանցկացվի 3 տարիքային խմբով և առանձին գործող աթլետ մարզիկների խմբով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 2005-2007 թթ. ծնված դպրոցականների համար (2 կմ) (աղջիրներ և տղաներ),

2) 2-րդ տարիքային խումբ՝ 2004-1987 թթ. ծնված կանայք, 2004-1982 թթ. ծնված տղամարդիկ, (10 կմ),

3) 3-րդ տարիքային խումբ՝ 1986 թ. ծնված և բարձր տարիքի կանայք, 1981 թ. ծնված և բարձր տարիքի տղամարդիկ, (10 կմ),

4) աթլետիկայով զբաղվող ՀՀ քաղաքացիները, առանց տարիքային սահմանափակման խմբով, (10 կմ):

9. Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից կազմավորված մրցավարական հանձնաժողովը:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

10. Մրցաշարին 3 տարիքային խմբերում ինչպես նաև առանձին գործող աթլետների խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով:

1-ին տարիքային խմբի՝ 2 կմ. վազքում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցահասակ տղաները և աղջիկները պարգևատրվում են համակարգիչներով, իսկ 2-րդ, 3-րդ խմբերում և առանձին գործող աթլետների խմբերում 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցները (10 կմ) (կանայք և տղամարդիք), դրամական մրցանակներով:

11. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում են համարներ և հավաստագրեր: Դրամական մրցանակներով կպարգևատրվեն ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնակիցները, իսկ ՀՀ քաղաքացի չհանդիսացող մասնակիցները (միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայաչուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ) կարող են մասնակցել մրցաշարին, առանձին հաշվարկով և մրցանակային 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները՝ (տղամարդիկ և կանայք) կպարգևատրվեն հավաստագրերով, մեդալներով, իսկ 1-ին տեղեր գրաված մասնակիցները նաև հուշանվերներով:

Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ

12. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցումների անցկացման համար, (կամավորներին սնունդ), մրցավարներին և կամավորներին մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), մրցավարների պարգևավճար, մրցանակակիրներին՝

գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, մարզաշապիկներ, մասնակցության համարներ, 1-ին տարիքային խմբի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցահասակ տղաներին և աղջիկներին համակարգիչներ, դրամական մրցանակներ 2-րդ և 3-րդ տարիքային խմբերի և առանձնացված գործող աթլետների խմբերի՝ 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 6-10-րդ տեղերը՝ 75.000 ՀՀ դրամ, 11-20-րդ տեղերը՝ 50.000 ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող մասնակիցներին (միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայաչուցիչներ, օտարերկրյա զբոսաշրջիկներ) մրցաշարում, մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկ-մարզուհիներին՝ հավաստագրեր, մեդալներ, իսկ 1-ին տեղեր գրաված մասնակիցներին նաև հուշանվերներ:

Հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, ռադիոհանգույցի վարձակալում, կաշվե թղթապանակներ, ծաղկեփնջեր, հրավառություն, հաղորդավարի ծառայություն, տպագրական նյութեր, տարածքի ձևավորում, նկարահանում, ուղիղ եթերի ապահովում, շարժական բեմ և Լեդ էկրանի ապահովում, տրանսպորտային ծառայություն, դրոշների ձեռք բերում, հրավառություն, գրենական պիտույքներ, բեռնատար ավտոմեքենաներ՝ մարզագույքը տեղափոխելու համար և գրենական պիտույքների ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

13. Մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, սնունդ և ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

14. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և մրցաշարին մասնակցելու համար առողջության վերաբերյալ տեղեկանքի պատճենները: Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2022 թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ: Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (010) 59-96-33, (010) 59-96-32, (094) 80-09-77, մասնագիտական հարցերի դեպքում զանգահարել (077) 85-81-08_երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի հունվարի 6 -ի
№ ԿԿ 92-Ա/Հ հրամանի

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի հայտի օրինակելի ձև

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագիրի, սոց. քարտի համարը	Բնակության վայրը, հասցեն	Հեռախոսի համար
1.					
2.					
3.					